ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «07» 03 2018թ № 301-Ա

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԼԻԱԶՈՐ ԱՆՁ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱԶԴԱՐԱՐԻՆ ՏՐՎՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 11-ի N1229-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 13-րդ կետի «դ» ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N272-Ն որոշման պահանջները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմում՝ ներքին և արտաքին ազդարարման դեպքում, հաղորդումներին ընթացք տալու, հաշվառելու, ձևակերպման ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը ապահովելու նպատակով.
   1) Որպես լիազոր անձ սահմանել՝ Նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Կարապետյանին:

2) Որպես պատասխանատու ստորաբաժանում սահմանել Նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժինը:

2. Հաստատել՝ Նախարարության աշխատակազմում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման և ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը՝ համաձայն Հավելվածի:

3. Նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ, պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Նելլի Մուրադյանին՝

   Ներքին և արտաքին ազդարարման դեպքում՝ ապահովել «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հաղորդումների հաշվառումը և ընթացք տալը:

4. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ՝ Անահիտ Խեչոյանին՝

   Նախարարության աշխատակազմում ազդարարների կողմից ներկայացվող հաղորդումների հաշվառման, ձևակերպման և ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը և Պատասխանատու անձանց տվյալները տեղադրել Նախարարության կայքէջում:

5. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանման ղեկավարներին՝ պատասխանատու անձանց պահանջով տրամադրել ներքին և արտաքին ազդարարման հաղորդումներին անմիջականորեն վերաբերող համապատասխան բոլոր նյութերի պատճենները :

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Կարապետյանին:

Հարգանքով՝

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված

ՀՀ տնտեսական զարգացման և

ներդրումների նախարարի 2018 թվականի

մայիսի 7-ի 304-Ա Հրամանի

ԿԱՐԳ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱԶԴԱՐԱՐԻՆ ՏՐՎՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Սույն կարգով սահմանվում է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմում (այսուհետ՝ Նախարարություն) ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման, ձևակերպման, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը:

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված ժամկետներում հաղորդումները Նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի (այսուհետ՝ Պատասխանատու անձ) կողմից հաշվառվում են գրանցամատյանում՝ համապատասխան գրառման կատարմամբ: Գրանցամատյանում հաշվառվում են նաև վերահասցեագրված հաղորդումները:

2. Գրանցամատյանում արձանագրվում են հետևյալ տեղեկությունները՝

1) հաղորդման հաշվառման հերթական համարը,

2) հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը,

3) հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը.

4) հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը.

5) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների ամբողջական նկարագիրը.

6) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների արդյունքը.

7) նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ.

8) ազդարարի ստորագրությունը.

9) գրանցամատյանը վարողի ստորագրությունը.

10) հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ:

3. Պատասխանատու անձը համարակալում, ստորագրում, (փաստաթղթային տարբերակով վարման դեպքում) նաև կնքում է գրանցամատյանի բոլոր էջերը:

4. Պատասխանատու անձը վարում է գրանցամատյանի փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակը:

5. Հաղորդման հաշվառման նպատակով կազմվում և վարվում է գործ, որում պահվում են նաև գրանցամատյանում արձանագրված տեղեկություններին վերաբերող համապատասխան բոլոր նյութերի պատճենները:

6. Ներքին ազդարարումն սկսվում է ազդարարի կողմից իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի կողմից լիազորած անձին (այսուհետ՝ Լիազոր անձ) հաղորդում ներկայացնելով:

7. Եթե հաղորդումն ստացել է ազդարարի անմիջական ղեկավարը կամ նրա վերադասը կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձ կամ սույն կարգի 5-րդ կետով չնախատեսված անձը, ապա նա պարտավոր է հաղորդումն անհապաղ փոխանցել Նախարարին կամ նրա Լիազորած անձին:

8. Ներքին ազդարարման դեպքում՝ Լիազորած անձը, իսկ արտաքին ազդարարման դեպքում՝ Նախարարությունը.

1) ապահովում է հաղորդման անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառումը.

2) իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում հաղորդման հաշվառման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է վարույթի հարուցումը.

3) ապահովում է հարուցված վարույթի գաղտնիությունը.

4) իր իրավասությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում հաղորդման իսկությունն ստուգելու նպատակով.

5) իր իրավասության շրջանակներում հաղորդման իսկությունն ստուգելիս հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնում է Հայաստանի Հանրապետության դատախազություն.

6) իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով.

7) ապահովում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

8) ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը.

9) հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ:

9. Ներքին ազդարարման նկատմամբ ընդհանուր վերահսկողությունն իրականացնում է Լիազոր անձը:

10. Արտաքին ազդարարումն սկսվում է ազդարարի կողմից Նախարարություն հաղորդում ներկայացնելով:

11. Ներքին և արտաքին ազդարարման հիման վրա հարուցված վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Հարուցված վարույթի արդյունքում ընդունվում է

համապատասխան ակտ, որի մասին ակտի ընդունման պահից եռօրյա ժամկետում ազդարարը ծանուցվում է:

12. Եթե Նախարարություն ներկայացված հաղորդումը չի վերաբերվում Նախարարության իրավասությանը, ապա եռօրյա ժամկետում այն վերահասցեագրվում է համապատասխան իրավասու մարմնին՝ ծանուցելով ազդարարին:

13. Եթե ազդարարը համաձայնություն չի տվել իր անձնական տվյալները բացահայտելու վերաբերյալ, Նախարարությունը ստանալով իր իրավասությանը չվերաբերող հաղորդում իրավասու չէ վարույթ հարուցելու և մինչև հաղորդումն ըստ ենթակայության ուղարկելը պարտավոր է ստանալ ազդարարի նախնական համաձայնությունը: Ազդարարի համաձայնության բացակայության դեպքում հաղորդումն ուղարկվում է ըստ ենթակայության՝ առանց ազդարարի անձնական տվյալները բացահայտելու:

14. Եթե վարույթի ընթացքում պարզվում է, որ ազդարարը օրենքով նախատեսված կարգով հաղորդում ներկայացնելիս գործել է անբարեխղճորեն, ապա հաղորդումն ստացած անձը դադարեցնում է ազդարարին պաշտպանության տրամադրումը, որի մասին որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում ծանուցում է ազդարարին:

15. Եթե ազդարարի ոչ բարեխիղճ գործողությունը պարունակում է հանցագործության հատկանիշներ, ապա Նախարարությունը անհապաղ այդ մասին հայտնում է Հայաստանի Հանրապետության դատախազություն: